աղբիւրներ թունաւորեց, ինչպէս վկայում է պատմութիւնն, եւ աջողեց„:

Մի երրորդ տեղ ասում է:

"Շահաբաս Մեծի ժամանակ Պարսկաստանը սկսեց ծաղկել. նա մի արդարադատ թագաւոր էր եւ միայն ձգտում էր իր տերութիւնը ծաղկեցընել ու իր ժողովուրդն երջանկացընել: Նա իր տերութիւնը դատաւ խիստ յօշոտուած եւ յափշտակուած, մեծ մասամբ աղքատացած եւ կողոպտուած: Բայց դժուար է հաւատալ, թէ նրա կառավարութիւնն ինչքան բարիք բերեց երկրին:"

Առաջ բերինք եւ Բէհման Միրզայի վկայութիւնը:

"Երբ որ Զաղալ Օղլի սպարապետի դալստեան լուրն տարածուեց եւ նա սկսեց մտենալ Երեւանին ու Նախիջեւանին, Շահաբաս նկատելով, որ նրան դիմադրելու ոյժ եւ կարողութիւն չունի, մտածեց քշել Պարսկաստանի խոքերն Երեւանի, Նախիջեւանի եւ նրանց շրջակայ տեղերի բնակիչներին: Այդ բնակիչների մեծ մասը փճացաւ ճանապարհին, մանաւանդ Երեւանի եւ Նախիջեւանի Հայերի մեծ բաղմութիւնը հիւանդութիւնից ոչնչացաւ. նրանց քշելուց յետոյ Շահաբաս հրամայեց, որ բոլոր արտերը հրդեհեն, այրեն, որպէս զի Զաղալ-Օղլու զօրքը չկարողանայ պաշար գտնել:„

Ինչպէս տեսնում ենք, Բէհման Միրզան վաճառականութեան մասին ոչ մի խօսք չէ ասում:

Ադամ Օլէարիուս եւս ոչ մի խօսք չէ ասում գաղթականութեան եւ նրա պատճառների մասին, այլ միայն հարեւանցի յիշում է, խօսելով Ջուղայի մասին, թէ "Նոր-Ջուղայի